

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### 1. Հարկային և մաքսային օրենսդրության նորություններ 2

- 1.1 ՀՀ կառավարության որոշումներ ----- 2
- 1.2 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ ----- 2

### 2. Հարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ 8

- 2.1 Ծրագրեր և կատարողականություն ----- 8
- 2.2 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների ----- 9
- 2.3 Միջազգային համագործակցություն ----- 9
- 2.4 Ուսուցում, մրցույթ ----- 9
- 2.5 ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ տվյալներ ----- 10
- 2.6 Հարկային և մաքսային վարչարարության վերաբերյալ վիճակագրական տվյալներ ----- 11

# 1. ԶԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 1.1 ԶՅ կառավարության որոշումներ

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի հուլիսի 31-ի N 314 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	23 փետրվարի 2012թ, N 183-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 12 (886), 05.03.2012թ.

### Համառոտ նկարագիր

Որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվում ՀՀ կառավարության 1997 թվականի հուլիսի 31-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում առաքվող կամ տրամադրվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների գրանցման (հաշվառման) մասին» N 314 որոշումը:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի հուլիսի 31-ի N 315 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	23 փետրվարի 2012թ, N 191-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 13 (887), 07.03.2012թ.

### Համառոտ նկարագիր

Որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվում ՀՀ կառավարության 1997 թվականի հուլիսի 31-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրանքի, ապրանքների և դրանց գների (հասույթի) գրանցման (հաշվառման) մասին» N 315 որոշումը:

## 1.2 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ

Փաստաթուղթ	«2011 թվականի ընթացքում հարկային մարմնից ձեռք բերված հարկային հաշիվների ձևերի օգտագործման մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ Նախագահի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	03 փետրվարի 2012թ. N 4
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական Նորմատիվ ակտերի տեղեկագիր № 6 (419), 01.03.2012թ.

### Համառոտ նկարագիր

Պարզաբանմամբ նշվում է, որ մինչև 2011 թվականի դեկտեմբերի 27-ը հարկային մարմնից ձեռք բերված այն հարկային հաշիվների ձևերը, որոնցում բացակայում է «ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը» տողը, մինչև ՀՀ

կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 9-ի N 1630-Ն որոշման 2.3-րդ կետով սահմանված ժամկետը՝ մինչև 2012 թվականի հունիսի 30-ը ներառյալ, կարող են օգտագործվել կազմակերպությունների կամ

անհատ ձեռնարկատերերի կողմից՝ «հարկ վճարողի հաշվառման համարը» տողի վերջին (ձախից՝ աջ) վանդակից հետո լրացնելով «/» նշանը և «1» թվանշանը:

Փաստաթուղթ	«Քաղաքաշինության կամ այլ բնագավառում գործունեություն իրականացնելու լիցենզիա ունեցող հարկ վճարողների նկատմամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի «Բ» ենթակետի կիրառման մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	03 փետրվարի 2012թ. N 5
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր N 6 (419), 01.03.2012թ.

### Համառոտ նկարագիր

**1.** | Քաղաքաշինական բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող այն անձինք, որոնք բավարարում են ԱԱՀ-ի շեմի կիրառության համար «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված մյուս պահանջներին և որոնց լիցենզիայի՝ ստացված ներդիրներին համապատասխանող գործունեության բոլոր տեսակների համար պետական տուրքի ընդհանուր գումարը փոքր է 100 հազար դրամից, 2011թ. ընթացքում կարող են.

**1)** համարվել ԱԱՀ վճարող, եթե այդ անձինք իրենց ԱԱՀ վճարող են համարել՝ հաշվի առնելով «Պետական տուրքի մասին» ՀՀ

օրենքում փոփոխություններ կատարելու մասին» 2010թ. դեկտեմբերի 8-ի ՀՕ-242-Ն օրենքով սահմանված պետական տուրքի դրույքաչափերը,

**2)** որևէ ամսաթվից մինչև 2011թ. ավարտը չհամարվել ԱԱՀ վճարող, եթե այդ անձինք իրենց ԱԱՀ վճարող չեն համարում՝ հաշվի առնելով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» 2011թ. հունիսի 23-ի ՀՕ-231-Ն օրենքը,

**3)** չհամարվել ԱԱՀ վճարող, եթե այդ անձինք 2011թ. տարեսկզբից իրենց ԱԱՀ վճարող չեն համարել լիցենզիայի վերաձևակերպման



համար օրենքով ժամկետ սահմանված լինելու, պետական տուրքի վճարման ժամկետը լրացած չլինելու, իսկ հետագայում՝ հաշվի առնելով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» 2011թ. հունիսի 23-ի ՀՕ-231-Ն օրենքը:

**2.** Անկախ վերոնշյալ **1)** և **2)** կետերի դրույթներից, քաղաքաշինական բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող այն անձինք, որոնք 2011թ-ին ներկայացրել են «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված՝ ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ հարկային մարմնի հաստատած ձևի գրավոր հայտարարություն, համարվում են ԱԱՀ վճարող՝ օրենքով սահմանված օրվանից:

**3.** Քաղաքաշինական բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող անձանց կողմից 2011թ. ընթացքում դուրս գրված հարկային հաշիվները կարող են անվավեր ճանաչվել, եթե հարկային հաշիվները ան-

վավեր են ճանաչվում՝ կապված ԱԱՀ-ի շեմից օգտվելու հանգամանքի հետ: Քաղաքաշինական բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող և իրենց ԱԱՀ վճարող չհամարող անձանց կողմից 2011թ-ի ընթացքում դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները ենթակա են վճարման պետական բյուջե «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

**4.** 2012թ. հունվարի 1-ից քաղաքաշինական և (կամ) այլ բնագավառներում գործունեության լիցենզիա ունեցող կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի նկատմամբ ԱԱՀ-ի շեմը կիրառելի չէ, եթե տվյալ գործունեության ստացված լիցենզիայի համար պետական տուրքի, իսկ օրենքով լիցենզիայի ներդրի համար պետական տուրք սահմանված լինելու դեպքում՝ ստացված ներդրներով նախատեսված գործունեության բոլոր տեսակների համար պետական տուրքի ընդհանուր գումարը կազմում է 100 հազար դրամ կամ ավելի:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարության 2001 թվականի ապրիլի 16-ի N 02/456 հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	13 փետրվարի 2012թ, N 40-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական Նորմատիվ ակտերի տեղեկագիր N 8 (421), 15.03.2012թ.

### Համառոտ նկարագիր

Հրամանով փոփոխություններ և լրացումներ են կատարվում ՀՀ ՊԵՆ 16.04.2001թ. «Եկամտահարկի հաշվարկման և բյուջե վճարման կարգի մասին» հրահանգը հաստատելու մասին» N 02/456 հրամանում:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարության 2001 թվականի փետրվարի 26-ի N 02/207 հրամանում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	28 փետրվարի 2012թ, N 60-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական Նորմատիվ ակտերի տեղեկագիր N 8 (421), 15.03.2012թ.

### Համառոտ նկարագիր

Հրամանով փոփոխություն է կատարվում ՀՀ ՊԵՆ 26.02.2001թ. «Մաքսային արժեքի մանրամասնությունների հայտարարագրի լրացման կարգի հաստատման մասին» թիվ 02/207 հրամանով հաստատված կարգի 1.2.1 կետում, որի համաձայն սահմանվում է, որ մաքսային արժեքի մանրամասնությունների

հայտարարագիրը (Ձև ՄՅ. 1) կարող է լրացվել բոլոր այն դեպքերում, երբ ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը որոշվում է հայտարարատուի կողմից, ՀՀ մաքսային օրենսգրքի 87-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ մաքսային արժեքի որոշման գործարքի գևի մեթոդով:



Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության պետական մարմինների, ինչպես նաև կրթության, մշակույթի և սոցիալական պաշտպանության ոլորտների պետական կազմակերպությունների սոցիալական փաթեթում ներառված ծառայություններից օգտվելու արդյունքում ֆիզիկական անձանց մոտ առաջացող եկամուտները եկամտահարկով չհարկելու հարցի վերաբերյալ» ՀՀ ԿԱ ՊԵԿ Նախագահի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	20 փետրվարի 2012թ, N 6
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական Նորմատիվ ակտերի տեղեկագիր № 8 (421), 15.03.2012թ.

### Համառոտ նկարագիր

Պարզաբանմամբ նշվում է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ սոցիալական փաթեթի հատկացման համակարգը ներդրվել է ՀՀ կառավարության՝ որպես ՀՀ պետական մարմնի, որոշման հիման վրա, ՀՀ պետական մարմինների, ինչպես նաև կրթության, մշակույթի ու սոցիալական պաշտպանության ոլորտների պետական կազ-

մակերպությունների սոցիալական փաթեթում ներառված ծառայություններից օգտվելու արդյունքում ֆիզիկական անձանց մոտ առաջացող եկամուտները եկամտահարկով հարկման նպատակով ընդունվում են որպես նվազեցվող եկամուտներ և եկամտահարկով չեն հարկվում:

Փաստաթուղթ	«Անշարժ գույքի գնահատման գործունեություն իրականացնող հարկ վճարողների նկատմամբ 2012 թվականին ավելացված արժեքի հարկի շեմը կիրառելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	20 փետրվարի 2012թ, N 7
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական Նորմատիվ ակտերի տեղեկագիր № 8 (421), 15.03.2012թ.

### Համառոտ նկարագիր

Պարզաբանմամբ նշվում է, որ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» 08.12.2011թ. ՀՕ-335-Ն օրենքի ուժի մեջ մտնելու հետ կապված անշարժ գույքի գնահատման գործունեություն իրականացնող հարկ վճարողների նկատմամբ ԱԱՀ-ի շեմը 2012թ-ին կիրառվում է, եթե՝

- 1) բավարարում են «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված պայմաններին,
- 2) հարկային մարմին չեն ներկայացրել ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 11.02.2011թ. «Ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարության ձևը հաստատելու մասին» N 51-Ն հրամանով սահմանված ձևի հայտարարություն՝ ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ:



Փաստաթուղթ	«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ կետի կիրառության վերաբերյալ» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	01 մարտի 2012թ, N 12
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական Նորմատիվ ակտերի տեղեկագիր № 8 (421), 15.03.2012թ.

### Համառոտ նկարագիր

Պարզաբանմամբ նշվում է, որ.

**1.** կոմիսիայի կամ գործակալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրերի դեպքերում

ինչպես կոմիսիոնների կամ գործակալի, այնպես էլ կոմիտենտի կամ պրինցիպալի համար ԱԱՀ-ի գծով հարկային պարտավորության ծագման պահը որոշվում է վաճառքի

համար նախատեսված ապրանքները կոմիսիոների կամ գործակալի կողմից գնորդներին առաքվելու կամ հանձնվելու կամ ծառայությունները պատվիրատուներին մատուցվելու պահով.

**2.** | հաշվի առնելով այն հանգամանքը, որ կապի կամ հեռահաղորդակցության ոլորտի օպերատոր համարվող հանձնարարողի կամ պրինցիպալի կողմից թողարկված լիցքավորման քարտերը համարվում են ոչ թե ապրանքներ, այլ կապի կամ հեռահաղորդակցության որոշակի տեսակից օգտվելու իրավունքի համար կանխավճար պարունակող կրիչներ, իսկ այդ քարտերն իրացնող հանձնակատարները կամ պրինցիպալի անունից հանդես եկող գործակալները այդ քարտերի իրացմամբ գնորդներին կապի կամ հեռահաղորդակցության ծառայություններ չեն մատուցում՝ հանձնակատարի կամ գործակալի համար ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն է համարվում հանձնակատարին կամ գործակալին հասանելիք գումարը (առանց ԱԱՀ).

**3.** | Եթե կոմիսիայի կամ գործակալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրերի շրջանակներում կոմիտենտը կամ պրինցիպալը համարվում են ԱԱՀ վճարողներ, իսկ կոմիսիոները կամ գործակալը չեն համարվում ԱԱՀ վճարողներ, կամ նրանց կողմից իրականացվող ապրանքների մատակարարման

և (կամ) ծառայությունների մատուցման գործարքները ենթակա չեն ԱԱՀ-ով հարկման, ապա՝

**ա.** կոմիսիոների կամ գործակալի կողմից դուրս չեն գրվում հարկային հաշիվ չհամարվող այլ հաշվարկային փաստաթղթեր, որտեղ որպես գործարքի գին նշվում է կոմիտենտի կամ պրինցիպալի հարկվող շրջանառության, դրա նկատմամբ հաշվարկվող ԱԱՀ-ի և կոմիսիոներին կամ գործակալին հասանելիք գումարի հանրագումարը,

**բ.** կոմիտենտի կամ պրինցիպալի համար ԱԱՀ-ի գծով հարկային պարտավորությունը որոշվում է կոմիսիայի կամ գործակալության պայմանագրի հիման վրա մատակարարված ապրանքի կամ մատուցված ծառայության արժեքի և համապատասխանաբար՝ կոմիսիոներին կամ գործակալին հասանելիք գումարի տարբերության նկատմամբ 16.67 տոկոս հաշվարկային դրույքաչափով հաշվարկված գումարի չափով.

**4.** | Եթե կոմիսիայի կամ գործակալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրերի շրջանակներում ինչպես կոմիտենտը կամ պրինցիպալը, այնպես էլ կոմիսիոները կամ գործակալը չեն համարվում ԱԱՀ վճարողներ կամ համարվում են ԱԱՀ վճարողներ, սակայն նրանց կողմից իրականացվող՝ ապրանքների մատակարարման և (կամ) ծառայությունների մատուցման գործարքները ենթակա





չեն ԱԱՀ-ով հարկման (ԱԱՀ-ով հարկման օբյեկտ չեն համարվում կամ ազատված են ԱԱՀ-ից), ապա ԱԱՀ-ով չհարկվող գործարքների համար (այդ թվում՝ կոմիսիոներին կամ գործակալին հասանելիք գումարի մասով) ինչպես կոմիտենտի կամ պրինցիպալի, այնպես էլ կոմիսիոների կամ գործակալի կողմից դուրս են գրվում օրենքով սահմանված կարգով հարկային հաշիվ չհամարվող այլ հաշվարկային փաստաթղթեր:

**5.** | կոմիսիայի կամ գործակալի անունից հանդես գալու պայման նախատեսող գոր-

ծակալության պայմանագրերի շրջականերում ապրանքների մատակարարման ու ծառայությունների մատուցման գործարքների՝ ԱԱՀ-ով շրջանառությունների որոշման՝ օրենքով սահմանված կանոնները կիրառվում են 2012թ. հունվարի 1-ից հետո կոմիսիայի կամ գործակալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության հիմունքներով կոմիսիոների կամ գործակալի կողմից ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման գործարքների նկատմամբ:

## 2. ՀԱՐԿԱՅԻՆ և ՄԱՔՍԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԴՐՎԱԳՆԵՐ

### 2.1 | Ծրագրեր և կատարողականություն

ՀՀ կառավարության 23.02.2012թ. N 195-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային վարչարարության 2012-2014թթ. ռազմավարությունը, որով սահմանվում են ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի առաքելությունը, տեսլականը և առաքելությանը հասնելու համար թվով 4 նպատակներ, որոնք են՝

**1.** | հարկ վճարողների սպասարկման որակի բարձրացում

**2.** | հարկային մարմնի հիմնական բիզնես գործընթացների վերակազմակերպում

**3.** | հարկային հսկողության ժամանակակից մեխանիզմների ներդրում

**4.** | մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարում, ներքին հսկողության մեխանիզմների կատարելագործում:



## 2.2 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների

20.02.2012թ-ից մինչև 20.03.2012թ-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի կողմից քննարկվել է 6 դիմում-գանգատ, որից՝

- բավարարվել է 3
- բավարարվել է մասնակի 1
- մերժվել է 1
- կասեցվել է 1 դիմում-գանգատ:



## 2.3 Միջազգային համագործակցություն

2012թ. փետրվարի 27-29-ը ՀՀ ԿԱ ՊԵԿ պատվիրակությունը մասնակցել է ք. Մինսկում «Սահմանների համալիր կառավարում» պիլոտային ծրագրի շրջանակներում կազմակերպված «Կենտրոնական մակարդակում ռիսկերի վերլուծության և կառավարման համակարգի կատարելագործում» թեմայով տարածաշրջանային աշխատաժողովին:

2012թ. փետրվարի 28-29-ը ապահովվել է մասնակցություն ք.Երևանում «Հարավային Կովկասում սահմանների համալիր կառա-

վարում» ծրագրի շրջանակներում կազմակերպված «Սահմանային հսկողության ընթացակարգերի մշակում» թեմայով ազգային աշխատաժողովին:

2012թ. մարտի 5-14-ը ապահովվել է մասնակցություն ք.Թբիլիսիում ԵՄ Արևելյան Գործընկերության շրջանակներում կազմակերպված «Սահմանների համալիր կառավարման հրահանգիչների նախապատրաստում» թեմայով տարածաշրջանային աշխատաժողովին:



## 2.4 Ոխուցում, մրցույթ

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության երեք թափուր պաշտոններ զբաղեցնելու համար հայտարարվել է մրցույթ, որը կկայանա 2012թ. մարտի 27-ին: Մրցույթին մասնակցելու համար դիմել են 60 քաղաքացիներ:

**2.5 | ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ տվյալներ**

Հ/Հ	Ցուցանիշ	Չափման միավոր	2012թ		
			փետրվար	հունվար-փետրվար	Աճի տեմպը նախորդ տարվա նկատմամբ (հունվար-փետրվար %)
1	ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից ՀՀ պետական բյուջե հավաքագրված հարկային եկամուտներ, պետական տուրք և պարտադիր սոցիալական ապահովության վճարներ, այդ թվում՝	մլն դրամ	57,557.6	112,963.5	104.5
1.1	Հարկային եկամուտներ, այդ թվում՝	մլն դրամ	45,108.1	89,624.7	103.8
1.1.1	ԱԱՀ	մլն դրամ	20,571.6	44,358.4	103.3
1.1.2	Շահութահարկ	մլն դրամ	8,080.0	12,414.7	110.4
1.1.3	Եկամտահարկ	մլն դրամ	7,141.3	13,247.0	115.4
1.1.4	Ակցիզային հարկ	մլն դրամ	2,046.7	3,790.3	99.2
1.1.5	Ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճար	մլն դրամ	989.0	4,758.6	112.2
1.1.6	«Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված գործունեության տեսակներից հաստատագրված վճար	մլն դրամ	1,588.8	3,217.3	97.9
1.1.7	Մաքսատուրք	մլն դրամ	2,166.4	3,380.3	91.9
1.1.8	Այլ հարկային եկամուտներ	մլն դրամ	2,524.3	4,458.2	79.2
1.2	Պետական տուրք	մլն դրամ	1,554.9	3,203.4	119.2
1.3	Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ	մլն դրամ	10,894.7	20,135.4	105.6
2	Արտաքին առևտրի ապրանքաշրջանառությունը, այդ թվում՝	մլն դրամ	162 513	295 766	117.4
2.1	Արտահանում	մլն դրամ	41 197	69 255	121.9
2.2	Ներմուծում	մլն դրամ	121 317	226 511	116.0



ևս մեկ քայլ՝  
**ԲԻԶՆԵՍԻՆ ԸՆԴԱՌԱՋ**  
 եռամսյա պարբերականությամբ հրատարակվում են  
 «Հարկատու» և «Մաքսատուն» ամսագրերը

**2.6 Զարկային և մաքսային վարչարարության վերաբերյալ վիճակագրական տվյալներ**

Յ/Յ	Ցուցանիշ	Չափման միավոր	2012թ. փետրվար
1	Նոր գրանցված (ՀՎՀՀ ստացած) հարկ վճարողների թիվ, այդ թվում՝	հատ	1268
1.1	Ֆիզիկական անձ	հատ	930
1.2	Իրավաբանական անձ	հատ	338
2	Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների թիվ	հատ	3 968
3	Պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ավարտված ստուգումների (ԲՍ) թիվ	հատ	48
4	Պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ավարտված ստուգումների (ԲՍ) արդյունքում առաջադրված գումարներ	մլն դրամ	4,303,711,343
5	Բռնագանձման և սևանկության համար ներկայացված հայցերի թիվ, այդ թվում՝	հատ	2012թ. հունվար-փետրվար 673
5.1	Բավարարված	հատ	233
5.2	Մերժված	հատ	10
5.3	Քննության ընթացքում գտնվող	հատ	634
6	Բռնագանձման և սևանկության համար ներկայացված հայցերով գանձված գումարներ	մլն դրամ	1593.9
7	Վարչական տույժ նշանակելու մասին որոշումների թիվ	հատ	4090
7.1	Վարչական տույժ նշանակելու մասին որոշումների համաձայն փաստացի գանձված գումարներ	մլն դրամ	68.0
8	ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից հարկ վճարողների գույքի վրա դրված արգելադրումների թիվ	հատ	615
8.1	ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից հարկ վճարողների գույքի վրա դրված արգելադրումներով փաստացի գանձված գումարներ	մլն դրամ	2093.8
9	ՀՀ ԿԱ ՊԵԿ հետաքննության վարչության կողմից հարուցված քրեական գործերի թիվ	հատ	9
9.1	ՀՀ ԿԱ ՊԵԿ հետաքննության վարչության կողմից հարուցված քրեական գործերի արդյունքում վերականգնված գումարներ	մլն դրամ	246.1
10	ՀՀ ԿԱ ՊԵԿ քննչական վարչության կողմից վարույթ ընդունված քրեական գործերի թիվ, այդ թվում՝	հատ	119
10.1	Ավարտված	հատ	10
10.2	Մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված	հատ	10
10.3	Կասեցված	հատ	12
11	Քննչական վարչության կողմից վարույթ ընդունված քրեական գործերի արդյունքում վերականգնված գումարներ	մլն դրամ	258.5

**ՎՍՏԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՌԱԽՈՍԸ՝**

**ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ**

**ՀԵՌԱԽՈՍԱԶԱՆԳԵՐԻ**

**ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ**

**«Թեժ գծից»՝ «Call center».**

**060 54 44 44**